ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՄՆ <<Ախուրյանի Ն.Աղբալյանի անվան ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Ֆրանսերեն>> առարկայի / 3 դասաժամ / ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՄ նախարարության կողմից հաստատված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը,որին հավակնում է (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում
5. ինքնակենսագրություն (Ձև 5),
6. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. հրատարակած հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում):
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մինչև ապրիլի 3-ը՝ ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 16:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. ապրիլի 6-ին ժամը 15:00-ին , ՀՀ ԿԳՄՄՆ <<Ախուրյանի Ն.Աղբալյանի անվան ավագ դպրոց>> ՊՈԱԿ -ում, հասցեն Շիրակի մարզ, գ.Ախուրյան, Մինաս Ավետիսյան 3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /0312/ 7-06-38 , բջջ. /093/ 05 70 05 հեռախոսահամարներով: